600.0417.21.12.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

21 դեկտեմբերի 2016 թվականի №417Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի №412Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ԿԱՐԱԼԵՎԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2016 թվականի դեկտեմբերի 6-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 9-ի «ԿԱՐԱԼԵՎԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Սեկա» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №412Ա՝

   1) որոշման մեջ «2018 թվականի դեկտեմբերի 2-ը» բառերը փոխարինել «2016 թվականի դեկտեմբերի 21-ը բառերով».

   2) որոշման 2-րդ կետով հաստատված՝ «ԿԱՐԱԼԵՎԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Սեկա» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0585 լիցենզիայի պայմանների 6-րդ և 9-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում (ժամանակահատվածում) կառուցել 1040 կՎտ հաշվարկային հզորությամբ «Սեկա» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:».

«9. «Սեկա» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 1120 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով.

1) հիդրոտուրբին VAPTECH Ֆրենսիս տիպի, 1167 կՎտ, 2016թ,
2) գեներատոր SF-500M6, 1400 կՎա, 1120 կՎտ, 2016թ:»

2. «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2015 թվականի հոկտեմբերի 20-ի №652-9683 գրությամբ ներկայացված №ՀԲԵՆ15/118-57 երաշխիքով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև «Սեկա» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածի համար ստանձնած երկու միլիոն վեց հարյուր հազար դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆՊԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
21 դեկտեմբերի 2016թ.
ժամը 16[00]